ԳԼՈՒԽ ՅԶԳ.

Ամենայն դուստր մաքուր պահեալ սրբութիւն կուսութեան իւրոյ ընծայեալ առ ամուսնացեալ առն իւրոյ, ունի պատիւ ելանել դաշտ 'ի զբօսանս, մտանել հանդէս, բազմիլ 'ի սեղան և կաքաւել ընդ ամենայն բդեշխ պատուելի տիրուհիս հայոց, այլ դուստր ապականիչ սրբութեան կուսութեան իւրոյ յառաջ քան զամուսնանալն իւր եթէ ընդ առն որում յեռոյ ամուսնացեալ, և եթէ ընդ այլ այր նախատեալ լինիցի 'ի միջի պատուելի կանաց հայոց և ոչ ոք թոյլ մի տացէ սմա մտանել առ խումբս իւրեանց։

ԳԼՈՒԽ ՅԶԴ.

Ո՛չ ոք այր մի տացէ ընդունելութիւն իւր առ ոչ ոք Եպիսկոպոսի ձեռնադրել քահանայ ոմն պաշտօնի իւրեանց եկեղեցւոյ մինչ սարկաւագն հասակաւ մի լինիցի երեսուն ամեայ, և եթէ յաւելի քան զերեսուն ամաց ահա բարեգոյն։

ԳԼՈՒԽ ՅԶԵ.

Ո՛չ ոք իշխանի մի ընդունեսցեն կրօնաւոր պակասակեան քանթէ յիսուն և հինգ ամաց, շըրջիլ 'ի յերեսս երկրի մէջ քաղաքաց և բնակութեանց, եթէ 'ի գործ նուիրանաց և կամ քարոզութեան որ ամենայն նուիրակ և քարոզիչ կրօ-